ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 263

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ <<ԱՐԾԱՓ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի պահանջով՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Մեղրաձոր համայնքում ստեղծել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի <<Արծափ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /այսուհետ՝ ՀՈԱԿ/:

2. Սահմանել, որ կազմակերպության գործունեության նպատակն է համայնքում կատարել հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների հատկացման, պահպանման և սպասարկման, հուշարձանների պահպանման, շահագործման, աղբահանության սանմաքրման, ջրագծերի վերանորոգման և շահագործման, ճանապարհների վերանորոգման, վերակառուցման և սպասարկման, հեղեղատարների, կոյուղիների վերանորոգման և սպասարկման, գիշերային լուսավորության համակարգերի սպասարկման աշխատանքներ:

3.Թույլատրել կազմակեպությանը զբաղվելու ձեռնարկատիրական գործունեության տեսակներով.

1)հանդիսությունների ծառայության մատուցում,

2)սգո արարողությունների ծառայությունների մատուցում,

3)աղբահանության ծառայության մատուցում

4)այլ ծառույությունների մատուցում:

4. Կազմակերպությանը օգտագործման իրավունքով ամրացնել համայնքի սեփականություն հանդիսացող 7-րդ փողոց 4-րդ հասցեի երկհարկանի շենքը:

5.Կազմակերպությանը սեփականության իրավունքով հատկացնել համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն հավելվածի:

6.Կազմակերպության ստեղծման մասին սույն որոշումը և կանոնադրությունը ներկայացնել ավագանու համաձայնությանը:

7.ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում առաջադրել Գագիկ Համլետի Բաբաջանյանի թեկնածությունը:

8.Հանձնարարել համայնքի տեղակալ Նարեկ Հարությունյանին՝ ավագանու քննարկմանը և հաստատմանը ներկայացնել ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը, աշխատակիցների քանակը և պաշտոնային դրույքաչափերը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 06-ին
գ.Մեղրաձոր

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ղեկավարի
2018 թվականի դեկտեմբերի 06-ի N263 որոշման

ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	քանակը /հատ/
1	գրասեղան	4
2	աթոռ	20
3	գրապահարան	2
4	չհրկիզվող պահարան	1

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 264

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի պահանջով՝ որոշում եմ.

1. Մեղրաձոր համայնքում ստեղծել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Արտավազ գյուղի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /այսուհետ՝ ՀՈԱԿ/:

2. Սահմանել, որ հաստատության գործունեության նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է: Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ ապահովում է նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզվի տիրապետման նախադրյալների ապահովումը, հաշվելու տարրական կարողությունների, զարգացումը, վարվեցողության տարրական կանոնների, հայրենի բնության և բնապահպանության , պատմության և ազգային մշակույթի տարրերի ծանոթացումը, երեխայի մտավոր , բարոյական , գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զարգացման ձևավորումը , աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը , դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

3. Կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Կոտայքի մարզ,Մեղրաձոր համայնք, գյուղ Արևտավազ, 2-րդ փողոց 1/1 երկհարկանի շենքը:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Արտավազ գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ-ին սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը՝ համաձայն հավելվածի:

5. Կազմակերպության ստեղծման մասին սույն որոշումը և կանոնադրությունը ներկայացնել ավագանու համաձայնությանը:

6. ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում առաջադրել Նունե Մուշեղի Ղազարյանի թեկնածությունը:

7.Հանձնարարել Մեղրաձոր համայնքի Արտավազ բնակավայրի վարչական ղեկավար Ռեմ Հովհաննիսյանին համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը ներկայացնել ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը,աշխատակիցների քանակը և պաշտոնային դրույքաչափերը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ դեկտեմբերի 06-ին
գ.Մեղրաձոր

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ղեկավարի
2018 թվականի դեկտեմբերի 06-ի N264 որոշման

ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	քանակը /հատ/
1	Համակարգիչ Intel/DDR4 4Gb/HDD 500GB/DVD RW/Monitor Phillips 2003V/KB/Mouse	1
2	Մանկական սեղան	8
3	Մանկական հագուստի պահարան	3
4	Սեղան մեկ տումբանի	1
5	Սեղան	2
6	Պահարան	1
7	Խաղալիքների պահարան	2
8	Սեղան	1
9	Մետաղյա դարակաշար	1
10	Աթոռ	6
11	Սառնարան Sharp SJ-58C-SL	1
12	Գազօջախ VERONI FC6542EW	1
13	Օդաքաշ VERONI LD22ECO	1
14	Լվացքի մեքենա Sharp ES-MM125Z-S	1
15	Արդուկ Braun TS355A	1
16	Փոշեկուլ SHARP EC-CA2121-Z	1

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 265

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով անձնական դիմումը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1.Սաթիկ Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր 07-045-061-059-001, վկայական 1481928, տրված 30 հուլիսի 2003թ./ տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր, 3-րդ փողոց, 11 փակուղի, 2 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 10-ին
գ.Մեղրաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 266

ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Բյուջետային համակարգի մասին >> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N89-Ն որոշումն՝ *որոշում եմ.*

Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի <<Մեղրաձոր համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N89-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումներ

Վարչական բյուջեի եկամտային մաս

1. Տող 1112 հոդված 7131 հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար նախատեսված <<18 503 000>> թիվը փոխարինել <<11 503 000>> թվով:
2. Տող 1111 հոդված 7131 գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված <<6 042 000>> թիվը փոխարինել <<5 592 000>> թվով:

Վարչական բյուջեի ծախսային մաս

1. Բաժին 01 խումբ 1 դաս 1 տող 1111000՝ աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111 սինթետիկ հաշիվ <<68 474 429>> թիվը փոխարինել <<64 844 429>> թվով:

1)Տող 1128700՝ կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267 սինթետիկ հաշիվ <<1531077>> թիվը փոխարինել <<1241077>> թվով:

2)Տող 1122100՝ ներքին գործուղումներ 4221 սինթետիկ հաշիվ <<50000>> թիվը փոխարինել <<0>> թվով:

3) Տող 1172300 պարտադիր վճարներ 4823 սինթետիկ հաշիվ <<80 000>> թիվը փոխարինել <<36 000>> թվով:

4) Տող 1123200՝ համակարգչային ծառայություններ 4232 սինթետիկ հաշիվ <<332 000>> թիվը փոխարինել <<280 000>> թվով:

5) Տող 1123100՝ վարչական ծառայություններ 4234 սինթետիկ հաշիվ <<120 000>> թիվը փոխարինել <<44 000>> թվով:

6) Տող 1123800՝ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 սինթետիկ հաշիվ <<518 000>> թիվը փոխարինել <<318 000>> թվով:

7) Տող 1112000՝ պարգևատրումներ դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 4112 սինթետիկ հաշիվ <<4 310 000>> թիվը փոխարինել <<2 422 500>> թվով:

2. Բաժին 9 խումբ 1 դաս 1 տող 1141000՝ սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական կազմակերպություններին 4511 սինթետիկ հաշիվ <<20 900 000>> թիվը փոխարինել <<18 743 500>> թվով:

3. Բաժին 08 խումբ 2 դաս 3 տող 1111000՝ աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111 սինթետիկ հաշիվ <<13 100 000>> թիվը փոխարինել <<14 132 000>> թվով:

1)տող 1112000՝ պարգևատրումներ դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ 4112 սինթետիկ հաշիվ <<100 000>> թիվը փոխարինել <<681 000>> թվով:

2) Տող 1125100՝ շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251 սինթետիկ հաշիվ <<1 000 000>> թիվը փոխարինել <<500 000>> թվով:

3)Տող 1121400՝ կապի ծառայություններ 4214 սինթետիկ հաշիվ <<200 000>> թիվը փոխարինել <<90 000>> թվով:

4) Տող 1128700՝ կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267 սինթետիկ հաշիվ <<400 000>> թիվը փոխարինել <<500 000>> թվով:

5) Տող 1126100՝ գրասենյակային ապրանքներ 4261 սինթետիկ հաշիվ <<400 000>> թիվը փոխարինել <<300 000>> թվով:

4.Բաժին 09 խումբ 4 դաս 1 տող 1162900՝ այլ նպաստներ բյուջեից 4729 սինթետիկ հաշիվ <<200 000>> թիվը փոխարինել <<0>> թվով:

5. Բաժին 01 խումբ 6 դաս 1 տող 1124100՝ մասնագիտական ծառայություններ 4241 սինթետիկ հաշիվ <<782 000>> թիվը փոխարինել <<204 000>> թվով:

1)Տող 1172300՝ պարտադիր վճարներ 4823 սինթետիկ հաշիվ <<240 000>> թիվը փոխարինել <<150 000>> թվով:

6. ԲԱԺԻՆ 08 խումբ 2 դաս 4 տող 1123800՝ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4269 սինթետիկ հաշիվ <<1 100 000>> թիվը փոխարինել <<1 480 000>> թվով:

1) Տող 1123800՝ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 սինթետիկ հաշիվ <<500 000>> թիվը փոխարինել <<921 000>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 12-ին
գ.Մեղրաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 267

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N384-Ն որոշման 1-ին կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ համայնքի բնակչության պաշտպանությունը կազմակերպելու, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման համար ստեղծել քաղաքացիական պաշտպանության համայնքային հետևյալ ծառայությունները.

1) Կապի և ազդարարման ծառայություն՝ <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության Մեղրաձորի տարածքային կենտրոնի բազայի հիման վրա:

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության Մեղրաձորի փոստային բաժանմունքի ավագ օպերատորը:

2) Բժշկական ծառայություն՝ համայնքի <<Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության բազայի հիման վրա:

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է <<Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենը:

3) Ինժեներական ծառայություն՝ համայնքի տարածքում գործող շինարարական և շինարարական վերանորոգման բազայի հիման վրա:

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքի ղեկավարի օգնականը:

4) Տրանսպորտային ծառայություն՝ համայնքի <<Մեղրաձոր Գոլդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բազայի հիման վրա:

Ծառայությանն պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքի ղեկավարի տեղակալը:

5) Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն՝ համայնքի տարածքում տեղակայված առևտրի և սննդի կազմակերպությունների բազայի հիման վրա:

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետը:

6) Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն՝ <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության <<Գեղամա>> մասնաճյուղի բազայի հիման վրա:

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է <<Գեղամա>> մասնաճյուղի Մեղրաձորի 35/10 ԿՎ ենթակայանի հերթապահը:

7) Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն՝ համայնքի տարածքում գործող գյուղացիական, ֆերմերային տնտեսությունների անտառտնտեսության բազայի հիման վրա:

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքի անասնաբույժը:

8) Հասարակական կարգի պահպանման ծառայություն՝ Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության բազայի հիման վրա:

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի 15 տեղամաս սպասարկողը:

9) Կոմունալ տեխնիկական ծառայություն՝ համայնքի տարածքը սպասարկող կոյուղու, գազի ձեռնարկությունների բազայի հիման վրա:

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետը:

10)Բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն:

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետը:

2. Սույն որոշման հսկողությունը դնել Մեղրաձոր համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 14-ին
գ.Մեղրաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 268

ԳՈՒՐԳԵՆ, ՀԵՂԻՆԵ, ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ ԵՎ ԼԻԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Գուրգեն Սուրենի, Հեղինե Գուրգենի, Նարինե Գուրգենի Խաչատրյանների և Լիդա Ավետիքի Պետրոսյանի դիմումն և <<ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գուրգեն, Հեղինե, Նարինե Խաչատրյաններին և Լիդա Պետրոսյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ՝ որոշում եմ

1. Ճանաչել Գուրգեն, Հեղինե, Նարինե Խաչատրյանների և Լիդա Պետրոսյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-045-0334-0102 ծածկագրով փաստացի օգտագործվող 1.161 հա մակերեսով 3-րդ կարգի խոտհարքի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրանց կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից չափագրված և Մեղրաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Գուրգեն, Հեղինե, Նարինե Խաչատրյաններին և Լիդա Պետրոսյանին սեփականության իրավունքներն ամրագրված խոտհարքի նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Մեղրաձոր համայնքի ղեկավարի օգնական Հակոբ Հակոբյանին:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 14-ին
գ.Մեղրաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 269

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի պահանջով, հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի N03 որոշումը և համայնքի բնակիչների դիմումները՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

1. Մեղրաձոր համայնքի <<այլ նպաստներ>> 4729 հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 255 000 /երկու հարյուր հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ Մեղրաձոր համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 14-ին
գ.Մեղրաձոր

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ղեկավարի
2018 թվականի դեկտեմբերի 14-ի N 269 որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Ազգանուն, անուն , հայրանուն	հասցեն	գումարը
1	Պողոսյան Սերգեյ Գուրգենի	Մեղրաձոր համայնք, գյուղ Փյունիկ, 1-ին փողոց, 2 նրբ. , 8տ.	50 000
2	Գեգջայան Ալեքսանդր Խաչատուրի	Մեղրաձոր համայնք, գյուղ Փյունիկ,1-ին փողոց, 8 փկղ., 1 տ.	40 000
3	Մովսիսյան Նուրվարդ Արսենի	Մեղրաձոր համայնք, գյուղ Փյունիկ, 1-ին փողոց, 4 փկղ. , 1 տ	30 000
4	Խաչատուրյան Սոֆյա Հրաչիկի	Մեղրաձոր համայնք, գյուղ Փյունիկ, 1-ին փողոց, 4նրբ., 5տ.	30 000
5	Գասպարյան Վասիլ Ոսկանի	Մեղրաձոր համայնք,գյուղ Փյունիկ, 1-ին փողոց, 2 նրբ., 5 փկղ., 5 տ.	30 000
6	Մանուկյան Ռազմիկ Կամոյի	Մեղրաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր, 11-րդ փողոց, 2նրբ., 2տ.	50 000
7	Գևորգյան Սամվել Նասլեդնիկի	Մեղրաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր,3-րդ փողոց, 68/1շ. 4	25 000
ԸՆԴԱՄԵՆԸ			255 000 /երկու հարյուր հիսունհինգ հազար / ՀՀ դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 270

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> 12-րդ հոդվածի 1-ին մասի, 12-րդ կետի, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 21-րդ հոդվածի և <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> օրենքի 20-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Մեղրաձոր համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 14-ին
գ.Մեղրաձոր